ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

20.03.2019թ.

ք. Երևան
ժամը՝ 11:30

Հանձնաժողովի նախագահ՝
Խաչիկ Կարապետյան
Հանձնաժողովի անդամներ՝
Նանե Քալաշյան
Հայկ Սարգսյան
Գարիկ Մկրտչյան
Թոմաս Զուլալյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Տիգրան Սաֆարյան

1. «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգի բանակցությունների հրավերի և արդյունքների մասին

(Խ. Կարապետյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 2019 թվականի մարտի 20-ին ժամը 10:00-ին Հանձնաժողովի գտնվելու վայրում անցկացվել է գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ «Վանդիստ» ՍՊԸ-ի հետ և 3-րդ չափաբաժնի գծով «Վանդիստ» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված գնային առաջարկը նվազեցրել է:

Չ/հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշ-վային գին	Մասնակցի անվանում	Առաջարկած գին		
				Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
3.	Անխափան սնուցման աղբյուր (UPS)	1000000	«Վանդիստ» ՍՊԸ	831250	166250	997500

1.2 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

2. «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգի նիստի արդյունքների ամփոփման մասին.

2.1 Հայտի գնահատումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով, գնման հայտի վերաբերյալ հարցումներ չեն իրականացվել, պարզաբանումներ չեն տրամադրվել, գնման գործընթացի շրջանակներում իսկաբանական գործողություններ չեն իրականացվել: Գնային

առաջարկի գնահատումն իրականացվել է հրավերով սահմանված կարգով՝ առանց ԱԱՀ-ի հաշվարկման:

2.2 ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կարիքների համար՝ «Համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարված՝ «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն որոշեց՝ **«ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/3»** ծածկագրով մրցույթի 1-ին և 2-րդ չափաբաժիններում առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«Կոմպմարկետ» ՍՊԸ-ին,** 3-րդ և 4-րդ չափաբաժիններում առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«Վանդիստ» ՍՊԸ-ին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը որոշելու մասին.

(Խ. Կարապետյան)

3.1 Գնահատող հանձնաժողովի նիստը հետաձգել՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներից պահանջել ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը, և ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ՀՀ Կառավարության առընթեր Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հարկային պարտավորությունների վերաբերյալ: Դրական եզրակացության դեպքում, ինչպես նաև հրավերով և հայտով սահմանված որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը ներկայացված լինելու դեպքում առաջին տեղ զբաղեցրաց մասնակիցներին կառաջարկվի կնքել պայմանագիր:

3.2 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալուց հետո ք. Երևան, Մ. Մկրտչյան 5բ հասցեում, 611 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Խ.Կարապետյան

Անդամներ՝ _____ Ն. Քալաշյան

_____ Հ. Սարգսյան

_____ Գ. Մկրտչյան

_____ Թ. Զուլալյան

Քարտուղար՝ _____ Տ. Սաֆարյան